

լութեան . և մինչ բանք լինէին չափել զհաց ազգային մերոց կրօնից , խղմտութիւնք տնտեսական զգուշութեան 'ի վեր երևէին 'ի շնութիւն լողաց , մանաւանդյատենին , որ առանց համարակալութեան առատանայր առ տեսչութիւն քաղաքական բարեկարգութեն , և չափաւոր զբիւրաւորսն համարէր : Կախ արհիեպիսկոպոսք եղեն յանդիման , և զհետնոցա եպիսկոպոսունք և ապա երիցունք կարգ ըստ կարգէ . թշնամանք , խեղկատակութիւնք խուժէին առ ամենայն քուէարկութիւն . սակն մարտիրոս իմն էր , և բեմ գաղղիացի և քրիստոնեայ ատենին ոչ ինչ ընդհատ 'ի բարձուանդակէ ատենին , յորմէ զուլիանոս հեթանոսամիտն հալածէր և ծաղածանակ առնէր զքրիստոնեայս : Աէր ոք 'ի նուաստ ճոռոմաբանից աւանաց , յորոյ չէին 'ի գրապանի թշնամանք , վիժածք խակութեան մտաց իւրոց , վոլթերեանն երգիծաբանութիւն կամթէ ումեք սիրելի ևս իցէ ասել հարուածն ըստ օրինադիր հանդիսի :

Իբրև . պաշտօնեայք քրիստոնէութեն մի ըստ միոնէ անցին ընդ փուրսիշն և ընդ բրածեծ , 'ի կարգ անկան կանոնիկոսք : Հայնժամ ոմն 'ի գործակալաց օրացաւ 'ի բեմն , Ճակատ նսրա լուսաւոր 'ի փառացն զոր շահելոց էր , և այնպիսի իմն տեսլեամբ , զի թուէր իմն ասել . Հապա , ունկնդիր լերուք , այժմ իսկ անհնարինս ծաղը արարից : Ունկնդիր եղեն գործակալին , և նա ասէ . Հինչ պիտանացու իցեն կանոնիկոսք . որպէս թէ ասէր , Հինչ պիտանացու իցէ գաղձն , յինչ պիտանացու իցէ փուշ և տատասկ . յինչ պիտանացու իցեն թերթք վիպասանուեց : Մտեանն , իբրև զի հզօր էր մտօք , 'ի լուր փիլսոփայական հանձարոյս զկայ էառ , և ջերմ ոգւով հաստատեցաւ՝ եթէ քանզի առ չարի՝ անհնարին էր սպանանել զկամոնիկոսս , այնու մարթ իցէ առնուլ քաջալեր՝ զի մի ևս կարող լի .

ցին 'ի վեր առնուլ զոք 'ի կարգ իւրեանց : Հինչ պիտանացու իցեն կանոնիկոսք , կրկնէին մեծախոհագոյնքն ատենին , և մեծամեծս քրքիջ բառնային . իբրև թէ ասէին իմն՝ եթէ իշխէին . Հինչ պիտանացու իցէ քրիստոնէութիւն . քանզի 'ի ջնջել նոցա մեծապէս նուազէր սակն , և մարթէր այնու յաձախել զկողմն տեսչութեան քաղաքական կարգաց 'ի բարգաւաճանս բարեկրօն վարուց , 'ի պերճութիւն գաւառին , և չափաւորութեն ոչ սակաւ : լուութք տեսող գոլով հանդիսին սակիցանձն իմ . “ Վրիստոնէութիւն տայ պատասխանի . — Համբերութիւն , : Ի վերայ եհաս մաղձացաւն մատուցանել նմա բարեպատեհ ժամզպատասխանւոյս , և գիտէք ամենեքեան եթէ քրիստոնէութիւն որպէս յօգուտ 'ի կիր էարկ զգէպսն :

(ԱՏԱՐՏՆ ՑԱՌԵԶԻՆԱՑՍ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պարէէ :

Այս մանտրտիկ թռչունները անհանդիստ , շատախօս և ուրիշ ամէն թռչուններէն աւելի սրտոտ են : Առվորաբար շատը մէկտեղ կը պտըտին մէկ ծառէն մէկալը թռչութելով , վեր վար ելլելով իջնալով . ոտքերնուն վըրայ ալ Ճանկեր ունենալնուն համար՝ ինչ դիրքով կ'ուզեն նէ՝ դիւրաւ կը կենան . երբեմն նաև բոլորովին կունը կի վրայ կախուածի պէս ծառերուն կեղենները կը կտցեն : Ասոնք դիւրաւ բռնելու համար ծուղակին քովերը բռու մը կամ ուրիշ դիշատիչ թռչուն մը կը դնեն . ասոնք անիկայ որ կը

1 Աս անունը գրինք Լիննէոսի Parus (Պարոս) ըսածին , որ տաճկերէն ճուլագ գուշու կամ լուլ գուշու , և ռամկօրէն ֆիւրէտ կըսուի . գաղզ . Mésange , ու Charbonnière . իտ . Cinciallegra . անդղ . Tit.



1 ՄԵծ Պարիկ : — 2 Փոքը Պարիկ : — 3 Թուփ Պարիկ : — 4 Կապոյտ Պարիկ :

տեսնեն, ամէն վտանգ աչքերնին առնելով՝ յանդկնութեամբ կը յարձրկին վրան որ ծեծեն սպաննեն իրենց թշնամին, ու մէկէն կը բռնուին կը մնան։ Ի՞այց ան ատենն ալ սաստիկ կը կատղին, ու որչափ որ կրնան՝ կ'աշխատին որ վարմը պատռտեն, վանդակը կը կըրծեն, մարդուն ձեռուըները ճանկըռտեն, կտուցով զարնեն։ շատ անգամ ալ իրաւցընէ կը պատռեն վարմը ու կը փախչին։ Կերակուրնին է ո՞ր և իցէ հունտ։ երբեմն ալ իրենցմէ մանր

թռչուններ բռնելով՝ անոնց ըղեղը կը հանեն կ'ուտեն։ Ը ատ բազմածին են։ մանաւանդ մէկ տեսակը կայ որ մէկ անգամ թռւխս նստելուն 20 հաւկիթէն աւելի կ'ածէ։ Ի սոնցմէ ոմանք իրենց բոյնը առանց աշխատելու ծակուծուկ տեղուանք կը դնեն։ ոմանք շատ վարպետութեամբ կը շինեն ու ձիւղերու ծայրերէն կը կախեն, ոմանք ալ պարզ ձիւղերու մէջ կը շինեն։

Դիմաւոր չորս տեսակ են ասոնք, ու աւելի գոյներովն ու մէծութեամ-

թը իրարմէ կը տարբերին : Շ ատին վրայի գոյնը մոխրագոյն կամ՝ մութ գեղին է, փորը դեղին կամ ձերմակ, գլուխը սև : Խրկայնութիւննին ընդհանրապէս չորս բթաշափ ու քիչ մը աւելի կամ պակաս :

ԲԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Խցիւազակ պահապան երիբ :

Ի՞սկէ առաջ Բազմավիպիս օթուոյն մէջ դրինք կոստանդնուպոլիս քաղաքին վրայ եօթը տարուան մէջ եկած անձրել, որուն միջին չափն էր 25 ½ մատնաշափ : Ուստի հոս ալ դընենք, ինչպէս որ խոստացանք, զանազան կլիմայի տակ եկած տարեկան անձրեին միջին չափը :

	Համական	Գառը.
	Տրն. գծ. հաբերամեր	
Սուրբ Դոմինիկոս, Ան-	. 97 " 3	. 308
դիլեան կղզեաց մէջ		
Կրանատառ	89 " 8	. 284
Պոմպայի, Հնդկաստան	. 65 " 8	. 208
Կալկաթա	64 " 9	. 205
Ճենովա, Իտալիա . . .	44 " 2	. 140
Փիզա	39 " 2	. 124
Սիլան	30 " 3	. 096
Նախով	30 " ..	. 095
Լիոն, Գաղղիա	28 " 1	. 089
Լիվրիոնուլ, Անդղիա . .	27 " 2	. 086
Մէնցլամըր	26 " 6	. 084
Վենետիկ, Իտալիա . . .	25 " 7	. 081
Լիլ, Գաղղիա	24 " ..	. 076
Լոնտրա, Անդղիա . . .	16 " 9	. 053
Փարիզ, Գաղղիա	15 " 9	. 050
Մարսիլիա	14 " 10	. 047
Փեթրպուրկ, Ռուսաստան .	14 " 6	. 046

Խւրոպացիք այսպիսի քննութիւններ ըլրած, մարդս կրնար կարծել թէ ամենայն երկրի վրայ հաւասարապէս կ'անձրեէ, կամ թէ մանաւանդ բեռուային ցուրտ երկիրները աւելի անձրե կուգայ քան թէ այրեցած գոտիին տակը : Ի՞սա այս աղիւսակէս յայտնի կ'երենայ թէ ընդհանրապէս խօսելով՝ անոր հակառակն է : Հասարակածին տակ ամէն տեղէ աւելի անձրե կուգայ, և քանի որ բեռուին

կը մօտենայ՝ այնչափ կը նուազի անձրելը . և յիրաւի, թէ որ այսպէս ըլլար՝ արեւուն տաքը կ'երէր կը մրկեր և ամայի կ'ընէր երկիրը : Խակ բեռուներուն մօտերը արեւուն տաքութիւնը քիչ ըլլալով, թէ որ նոյնչափ անձրե գար, խոնաւութենէ և ջրհեղեղէ կ'ապականէր երկիրը :

Ի՞ս տեսնելով՝ սքանչանալու է Ի՞ստուծոյ նախախնամութեանը գործքին վրայ, որ իւր անհուն իմաստութեամբը մեր ամէն հարկաւորութեցը հոգ տարեր է, և ինչպէս գերագոյն գիտութեամբ կարգադրեր է տիեզերաց մեքենան որ առանց սխալելու՝ գերագոյն մեքենայագործին դրած օրինօքը կը շարժի, և առանց մեր գիտնալուն մեր պիտոյքը կը լեցընէ :

Ի՞սա յայսմանէ շարժեալ քան թէ մեր ընթերցողաց հետաքրքրութեանը նիւթ մը պատրաստելու համար, այս աղիւսակս դրինք, որով յայտնի իմացուի թէ գիտութիւնը մարդուս անհաւատութիւն չորրվեցըներ, այլ ընդ հակառակն՝ քանի որ մարդս գիտութեան պարապի և բնութեան գաղտնիքը քննէ և սորվի, այնչափ աւելի Ի՞ստուծոյ մեծութիւնը և անհուն բարութիւնը կ'իմանայ : Ի՞նչպէս կ'ըսէ նոր գարերուս երևելի փիլիսոփան Պաքոն, թէ կցկտուր ու վերի վերոյ գիտութեան հետ կարելի է որ անհաւատութիւն ըլլայ . բայց կատարեալ փիլիսոփայութիւնը մարդս չէ թէ անհաւատ՝ հապա աղեկ աստուածապաշտ կ'ընէ : Խւ այս բանս գործքով ցըցուց իր վրան երևելին և անմահն իեւտոն, որ իրմէ առաջ եկող փիլիսոփաները գերազանցեց, և գաղտնեաց բնութեան աւելի վերահասու եղաւ, և հաշուի տակ ձգեց երկնային մարմնոց շարժման օրէնքը, և ոչ երբէք Ի՞ստուծոյ անունը կը յիշէր կ'ըսեն՝ առանց գլուխը բանալով պատկառանօք մեծարելու :

* *